ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ. Ներսես Մոկացի, *Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2009, 206 էջ:*

Միջնադարի հայ գրականության բնագրերի հրատարակության և ուսումնասիրմանը զուգահեռ մասնագետների ուշադրության կենտրոնում են եղել համեմատաբար «համեստ» հեղինակներ, որոնց գործունեությունն անուրանալիորեն ազդել է ժամանակաշրջանի գրական-հասարակական գործընթացի վրա, սակայն նրանց գրական ժառանգությունը դեռևս հավուր պատշաճի ուսումնասիրված չէ:

Այս բացերի էական լրացումն է անվանի գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Դոլուխանյանի՝ Ներսես Մոկացուն նվիրված մանրամասն և բովանդակալից աշխատությունը, որը Մոկացու երկերի քննական բնագրերի հրատարակումից հետո[1] սպասված էր:

Ուսումնասիրությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների, հայագիտական ուսումնասիրությունների և հատկապես ձեռագրական հարուստ նյութի հիման վրա: Մենագրության կառուցվածքային գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ամեն մի գլխի քննություն հեղինակը սկսում է նախ մատենագիտական, ապա նաև ձեռագրական փաստահարուստ նյութի քննությամբ. արդյունքում արված են կարևոր լրացումներ և վերանայված մի շարք թյուրիմացություններ ոչ միայն Ներսես Մոկացու կյանքի և ստեղծագործության հետ կապված:

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, որոնք համապատասխանաբար նվիրված են Ներսես Մոկացու կենսագրությանն ու ապրած ժամանակաշրջանին, գրական ժառանգությանը և հեղինակի երկերի լեզվական արվեստի մի շարք հարցերի քննությանը:

Առաջաբանի մեջ Ա. Դոլուխանյանը ներկայացրել է հիմնահարցի կարևորությունն ու բացերը՝ ուշադրության կենտրոնում ունենալով հատկապես Ներսես Մոկացու գրական վաստակի վերհանումն ու գնահատումը, հեղինակի գրական ժառանգության հետ կապված ճշգրտումները, համապատասխան վերլուծությունները, ստեղծագործությունների աղբյուրներն ու աղերսները, գրական-ստեղծագործական միջավայրը, որի շրջանակներում էլ առանձին քննության նյութ են դարձել նաև ժամանակաշրջանի հայտնի և Ներսես Մոկացու գործունեության հետ կապ ունեցող կրթօջախների վերաբերյալ որոշ հարցեր:

Գրքի առաջին՝ «Ներսես Մոկացին և իր ժամանակը» գլխում համակողմանի անդրադարձ է կատարված Ներսես Մոկացու ապրած ժամանակաշրջանին, կյանքի և գործունեության ուսումնասիրության պատմությանը, գործող հոգևոր դպրոցներին և արված է Ներսես Մոկացու գրական ժառանգության մատենագիտական մանրամասն քննություն: Գիտական բարեխղճությամբ ի մի են բերված Ներսես Մոկացուն տրված գնահատականներն ու նրա մասին կարծիքները: Հեղինակի կյանքի մի շարք փաստեր և թվականներ ճշտված-լրացված են ձեռագրական հարուստ նյութերի հիման վրա. այսպես՝ ձեռագրական նորահայտ փաստերով են հիմնավորված Ներսես Մոկացու ծննդյան թվականի հարցը, վարդապետական կոչում ստանալու թվականը: Ա. Դոլուխանյանը գիտական շրջանառության մեջ է դնում բանասերների ուշադրությունից վրիպած՝ Ներսես Մոկացու մասին ուշագրավ տեղեկություններ պարունակող Մաշտոցի Մատենադարանի № 3881 ձեռագիրը, որի պարունակած

---

[1] *Ներսես Մոկացի. Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Գ. Դոլուխանյանի, Երևան, 1975, Ներսես Մոկացի. Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Գ. Դոլուխանյանի, Երևան, 1985:*

կենսագրական հետաքրքիր գրքի հեղինակը զուգադրել է Ե. Լալայանի բերած երկու արձանագրությունների (դրանք Ստեփանոս Շատախեցու արձանագրություններն են, մեկը արված Ներսես Մոկացու տապանաքարի վրա և մյուսը՝ 1629 թ. Լիմ կղզում գտնվող մի խաչքարին) և Դավիթ Բաղիշեցու հաղորդած համառոտ կենսագրականի հետ: Այս նյութերի համեմատական քննությամբ Ա. Դոլուխանյանը հստակեցնում է Ներսես Մոկացու մահվան թվականը, այն է՝ 1625-ը, ինչպես նաև եզրակացնում. «Ներսես Մոկացու կյանքին վերաբերող այս երկու աղբյուրները (Դավիթ Բաղիշեցու հաղորդածը և № 3881 ձեռագրում պահպանվածը) իրենց հիմքում ունեն միևնույն աղբյուրը. դա Ներսես Մոկացու կորած վարքն է» (էջ 33):

Միջնադարի հեղինակների անունների շփոթ առկա է նաև Ներսես Մոկացու պարագայում. Ա. Դոլուխանյանի մանրաման քննությանն են արժանացել նույն ժամանակում ապրած և ստեղծագործած ծաղկող Ներսես Մոկացու կենսագրության փաստերը: Գրականագետը գիտական շրջանառության մեջ է դնում ծաղկողի կյանքի դրվագներն արտահայտող ձեռագրերի հիշատակարաններ, այնուամենայնիվ հնարավոր համարելով երկու Ներսես Մոկացիների գոյությունը:

Ա. Դոլուխանյանի բազմակողմանի պրպտումների արդյունքում Ներսես Մոկացու կենսագործունեությանը զուգահեռ հառնում են նաև հեղինակի հետ երբևէ կապ ունեցած կրթօջախների՝ Բաղեշի Ամիրդոլու վանքի, Սյունյաց Մեծ, Լիմ անապատականների դպրոցների պատմական անցյալը, մեր մշակույթի, գրական-պատմական զարգացման գործընթացի վրա դրանց ունեցած ազդեցությունն ու դերը, որոնց մասին քննությունն իրականացված է նորանոր փաստերի հայտնաբերմամբ կամ խմբագրումներով:

Քննվող նյութերի շարքում ուշագրավ է հատկապես իր՝ Ներսես Մոկացու թողած հիշատակարանը, որտեղ նա խոսում է Լիմի հիմնադրման հանգամանքների մասին (էջ 50-51): Ուսումնասիրության հիմքն են Ներսես Մոկացու երկերը պարունակող ուշագրավ ձեռագրերը: Նրան առնչվող կրթօջախների մանրամասն քննությունը ուշագրավ և փաստահարուստ է. մեր կարծիքով այն հետաքրքրական է նաև միջնադարի կրթության և ուսուցման գործով հետաքրքրվող մասնագետների համար:

Աշխատության երկրորդ՝ «Ներսես Մոկացու ժառանգության արժեքավորումը» գլխում գիտական բարեխղճությամբ ճշտված-սրբագրված են Ներսես Մոկացուն պատկանող, ինչպես նաև նրան վերագրվող ստեղծագործությունները: Ա. Դոլուխանյանը քննել է հետազոտվող հեղինակի պատմական բովանդակություն ունեցող երկերը, այնուհետև՝ միջնադարի առանցքային գաղափարին՝ հոգու և մարմնի փոխհարաբերությանը նվիրված երկեր: Գիտնականը նախ տալիս է յուրաքանչյուր երկի ուսումնասիրման պատմությունը, ապա հանգամանորեն ներկայացնում գրչագրերը (ամենայն բարեխղճությանբ նկարագրված են համապատասխան ձեռագրերը, հատկապես գրչական տարընթերցումները) և գրական աղերսները: Ներսես Մոկացու կյանքի և ստեղծագործության քննությանը վերաբերող գիտական գրականության մեջ արժևորելով Ն. Ակինյանի արած ճշգրտումներն ու սրբագրումները՝ Ա. Դոլուխանյանը ընթերցողի ուշադրությունն է հրավիրում բանասերների ուշադրությունից վրիպած մի երկի՝ «Գերահրաշ աստուած գոլով...» սկսվածքով քերթվածի վրա, որը Ներսես Մոկացուն չի պատկանում: Ամենայն մանրամասնությամբ գրականագետը քննում է այն չափածո 8 երկերը, որոնք աներկբայորեն Ներսես Մոկացու հեղինակածն են: Հանգամանալից քննության են ենթարկված «Ներբողեան գովեստի չորեցունց արանց...», «Ողբ վասն առմանն Երուսաղէմի», «Ներսէս Մոկացւոյ Գանձ ի նոր նահատակն տէր Անդրէաս Նախիճևանցի» երկերը:

Ներսես Մոկացին՝ որպես ԺԷ դարի հոգևոր-գրական կյանքի վերանորոգման ներկայացուցիչ, իր ստեղծագործության մեջ կարևորում է Սյունյաց մեծ անապատի չորս երևելիների՝ Մելիք Հայկազնի, Պողոս Մոկացու (այս գործչի հետ է Ներսես Մոկացին կապում եկեղեցաշինության գոր-

ծը), Սարգիս Ամբերդցու և Կիրակոս Տրապիզոնցու (նրանք կարևոր դեր խաղացին ուսուցման և կրթության ոլորտում) ներդրումը: Այս ներբողյանը («Ներբողյան գովեստի չորեցունց արանց») «ազգային ոգու բարձր արտահայտություն» լինելուց բացի նաև ճանաչողական արժեք ունի. արտահայտված են Պողոս Մոկացու, Սարգիս Ամբերդցու և Կիրակոս Տրապիզոնցու կյանքի ուշագրավ դրվագներ: Ա. Դոլուխանյանը գրական զուգահեռներ է անցկացնում Ներսես Մոկացու ներբողյանի և Աստվածաշունչ մատյանի (Երգ երգոց, Ա, Բ, Եզեկիել, Ա), Մովսես Խորենացու ու Գրիգոր Նարեկացու («Տաղ վարդավառին») երկերի համանման դրսևորումների հետ: Այս երկը անվանի գրականագետը դիտում է որպես Ներսես Մոկացու՝ ժամանակաշրջանի ընթացքով հիմնավորված լավատեսական տրամադրություններն արտահայտող գործ:

«Ներսէս Մոկացւոյ Գանձ ի նոր նահատակն տէր Անդրէաս Նախիճևանցի» երկով հեղինակը մեր գրականության մեջ առաջին անգամ գեղարվեստորեն անդրադառնում է Անդրեաս քահանայի նահատակությանը: Ա. Դոլուխանյանն այս երկը զուգադրում է Հայսմավուրքի, Առաքել Դավրիժեցու («Հայոց պատմություն» «Վասն նահատակութեան տէր Անդրէաս քահանային» գլուխը), Սամվել Անեցու շարունակողի՝ Անդրեաս քահանայի նահատակության մասին պատմածների հետ:

Հոգու և մարմնի խնդիրներն են արծարծված «Մանուկ մտավարժ էի…» բանաստեղծության մեջ, որը Ա. Դոլուխանյանը քննում է Գրիգոր Նարեկացու, Խաչատուր Կեչառեցու, Առաքել Սյունեցու, Գրիգոր Տղայի համանուն մոտիվն արտահայտող երկերի հետ: Նա կարևորում է բանաստեղծության ինքնակենսագրական շերտը, որի քննությամբ պարզում է այս քերթվածի գրության մոտավոր թվականը՝ 1622–1625 և տեղը՝ Լիմ անապատ: Միջնադարի գրական ավանդույթը թույլ է տալիս Ներսես Մոկացուն անհատական ապրումներից գնալ խոր ընդհանրացումների. հակադրվում են կենցաղավարության բարոյական և անբարոյական, խրախուսելի և մերժելի կողմերը (էջ 113), և հառնում է իդեալական մարդու պատկերը:

«Վիճաբանութիւն երկնքի եւ երկրի» քերթվածին Ա. Դոլուխանյանն անդրադարձել է առավել մանրամասնորեն: Այս բանաստեղծությունը դիտարկված է ժողովրդական երգի հետ ունեցած զուգահեռների համատեքստում: Զարգացնելով Գ. Հովսեփյանի, Աս. Մնացականյանի ուշագրավ նկատառումները քննվող տաղի վերաբերյալ՝ Ա. Դոլուխանյանն այն կարծիքն է հայտնում, թե Ներսես Մոկացու՝ ժողովրդական ընդհանուր հիմք ու ակունքներ ունեցող այս երկը, ի թիվս այլ մշակումների, «ամենահինն ու ամենաբնտիրն է» (էջ 120), հատկապես նկատի է առնվում այն հանգամանքը, որ Ներսես Մոկացու աշակերտ Ստեփանոս Շատախեցու վկայությամբ («Ողբ վասն առմանն Երուսաղէմի» երկի կապակցությամբ) Ներսես Մոկացին մշակել է ժողովրդի մեջ տարածված ստեղծագործություններ: Նման մոտեցումը թույլ է տալիս Ներսես Մոկացու երկերն ավելի լայն հարթությամբ դիտարկելու:

Մենագրության երրորդ գլխի («Ներսես Մոկացու երկերի գրական ուղղության, լեզվի և արվեստի մասին») քննության նյութ են դարձել Ներսես Մոկացու երկերի սեռաժանրային, լեզվառճական առանձնահատկությունները, ինչը Ա. Դոլուխանյանին հնարավորություն է տվել առավել ամբողջականորեն ուրվագծելու միջնադարի գրական գործընթացի յուրահատկությունները և այդ համատեքստում՝ հեղինակի ունեցած տեղն ու դերը: Ներսես Մոկացու քնարերգության սեռաժանրային առանձնահատկություններն ուսումնասիրված են հայ ժողովրդական բանահյուսության, Աստվածաշնչի, պարականոն գրականության և հայ հեղինակների հետ ունեցած կապի մեջ: Ներսես Մոկացին կարողացել է ստեղծել նոր և իր ժամանակաշրջանին հարազատ երկեր: Մանրամասնորեն վերհանված են Աստվածաշնչի պատկերային համակարգի հետ կապված հատվածները (էջ 154-55): Գրականագետը կարևորում է հատկապես Մովսես Խորենացու և Ներսես Մոկացու երկերի ներքին

ապրումների և մտորումների հարազատությունը (էջ 156-157): Ուսումնասիրողը նման զուգահեռներ է նկատում նաև Աստվածամոր վերափոխմանը նվիրված ներբողում, իսկ Գրիգոր Նարեկացու ազդեցությունը՝ «Մանուկ մտավարժ էի…» գողտրիկ քերթվածում: Ա. Դոլուխանյանը հատուկ տեղ է հատկացրել Ներսես Մոկացու երկերի սեռերի ու ժանրերի հարցին՝ նախընտրությունը տալով ժանրային առանձնահատկությունների վերհանմանը, մասնավորապես՝ ներբողի, ողբի, տաղի, գանձի, աղոթքի գրատեսակներին: Քննելով Ներսես Մոկացու ներբողները Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու նույն ժանրերի երկերին զուգահեռ՝ նա հիմնավորել է հեղինակի տեղն ու դերը տարբեր ժանրերի զարգացման գործում: Ներսես Մոկացու ողբն Ա. Դոլուխանյանը դիտում է որպես պատմական ողբի ավանդույթի նոր և արժեքավոր դրսևորում: Գիտնականն այն կարծիքն է հայտնում, որ Մոկացու ստեղծագործությունների մի մասը հակված է դեպի պոեմի ժանրը:

Առանձին քննված են Ներսես Մոկացու երկերի տաղաչափական և խոսքի արվեստի հատկանիշները. մասնավորապես՝ հանգավորման, տնատման, տաղաչափության, լեզվական արտահայտչամիջոցների դրսևորման առանձնահատկությունները: Խոսքի արվեստի առումով առավել հաջողված են համարված Սյունյաց մեծ անապատի հիմնադիրներին նվիրված ներբողը և «Մանուկ մտավարժ էի…» երկը: Մանրամասնորեն անդրադառնալով քրիստոնեական խորհրդապաշտության արտահայտությանը վերոնշյալ քերթվածների վրա՝ գրականագետը միաժամանակ քննում է լեզվական արտահայտչամիջոցների համակարգն ու դրանց բազմազանությունը (հատկապես՝ մակդիր, փոխաբերություն, բաղաձայնույթ և այլն): Ա. Դոլուխանյանն անդրադարձել է նաև Ներսես Մոկացու երկերի տաղաչափական առանձնահատկություններին և կարևորել հատկապես այն երկերը, որոնք գրված են «հայրենի կարգաւ» չափով՝ ընթերցողի ուշադրությունը հրավիրելով մի կարևոր հանգամանքի վրա. «հայրենի կարգաւ»-ն աստիճանաբար դուրս էր մղվում միջնադարի գրականությունից, իսկ Ներսես Մոկացու երկերն այդ չափով գրվածներից վերջիններից էին:

Ա. Դոլուխանյանի փաստահարուստ, բովանդակալից և հետաքրքիր սույն ուսումնասիրությամբ Ներսես Մոկացին բնութագրվում է որպես եկեղեցական եռանդուն ու ակտիվ գործիչ, շնորհալի բանաստեղծ և իր արժանի տեղն է գտնում միջնադարի հայ մյուս հեղինակների կողքին: Իսկ մատենագիտական-ձեռագրագիտական առատ նյութը, անվանի գրականագետի առաջ քաշած գիտական վարկածները, ենթադրությունները, ճշգրտված, խմբագրված և նորահայտ տեղեկությունները պարարտ հող են նախապատրաստում միջնադարի հայ քնարերգությամբ զբաղվողների համար ընդհանրապես:

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ